ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկաի համար եռամսեայ 1 տոլար թղթադրամ.
Եւրոպաի և այլ տեղերի համար » 5 Ֆրանգ
» » » » ամսական 2 »
Հաւատով կը ծախուի 20 սանդիմ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխներէն (Ն. Տ.)։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Գ ՏԱՐԻ ԹԻՒ 92

1888 ՅՈՒԼԻՍ 11
ՅՈՒՆԻՍ 29 (Հ. Տ.)

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

Կը հրատարակուի Չ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւններն։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրներն։
Յանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50)

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,, Ի Դ ՏԱՐԷՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

(1888 ՕԳՈՍՏՈՍ—89 ՅՈՒԼԻՍ)

Բաժնորդ դրուղի կարգին թողուած է որոշել իւր բաժնորդագին, պայմանով որ յետագայ դէպքերէն պակաս չլինի.

Ամերիկաի համար տարեկան մինչեւ 2 տոլար թղթադրամ.
Պարսկաստանի համար տարեկան մինչեւ 4 թուքլի թղթադրամ.
Եւրոպաի և այլ տեղերի համար տարեկան մինչեւ 10 ֆրանգ.

Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւնները ալ կընդունուին առանց տեւէ յաւելում անելու, այսինքն վեցամսեայն մինչեւ 5 ֆրանգ և եռամսեայն մինչեւ 2 ½ ֆրանգ. նոյն համեմատութեամբ հաշուելով նաեւ Ամերիկաի և Պարսկաստանի համար։

Հաւատով պիտի ծախուի 10 սանթիմ ամէն տեղ (Ամերիկաի մէջ 2 սենթ)։

Լրագրի անօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԵԼՄՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

(Շար. 91րդ թուէն եւ վերջ)

Արտաքին գործերի նախարարութեան համար որոշուած է տարեկան ծախք 4,556,000։ Դեսպանների, հիւպատոսների և իրենց պաշտօնեայների ամսականներն կանոնաւորապէս կը վճարուին Օսմանեան պանքային միջոցով։

Դատական գործերի նախարարութեան համար որոշուած է ելմտացոյցին մէջ տարեկան ծախք 7,544,000 Ֆրանք։ Իւր հասոյթներ չեն ղրկուիր ելմտական նախարարութեան (մալիյէ), այլ կը մնան դատական նախարարի տրամադրութեան տակ որ այդ հասոյթներով ամենէն առաջ ինք իր ամսական կը վճարէ, մնացածն ալ կը բաժնուի իւր առորագրեալ պաշտօնատարներուն և ծառայողներուն մէջ։ Դատաւորներն գրեթէ ամենքն ալ իրենց անբաւական ամսաթոշակներուն պակասը լեցուելու համար կը դիմեն այնպիսի միջոցներու որ հանրածանօթ են։

Բաժնորդագիրները կանխիկ պէտք է ղրկուին։

Արմենիա ի խմբագիր-Տնօրէնին օգոստոս և սեպտեմբեր ամիսներուն մէջ անելիք ճանապարհորդութիւններուն պատճառով, չորրորդ տարեշրջանի առաջին թիւը պիտի հրատարակուի 1888 հոկտեմբերը 3ին (սեպտ. 21), չորեքշաբթի օր։

Անոնք որ կը յօժարին աշխատիլ Արմենիա ի տարածման, թերթ առ թերթ 10 սանթիմին ծախելով իրենց քաղաքի մէջ, թող բարեհաճին դրել Արմենիաի խմբագրութեան, ծախելու պայմաններուն տեղեկանալու համար։

Անոնք որ կը յօժարին օգնել Արմենիաի խմբագրութեան 100 ֆրանգ նուիրելով այս Դ տարեշրջանի մէջ, հիմնադիր անդամ պիտի համարուին այն ընկերութեան որ մտադրութիւն կայ կազմելու, նպատակ ունենալով տառնձնել Արմենիա ի հրատարակութիւնն յաջորդ տարեշրջաններուն մէջ, ունենալ մի կանոնաւոր տպարան և բանալ մի գրախանութ (տես նել Արմենիա թիւ 84)։

Յանուցումներ կընդունուին Արմենիա ի մէջ հայերէն, ֆրանսերէն և անգլիերէն լեզուներով։

Խմբագիր-Տնօրէն
Մ ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայրենասիրական մտածումների համար մրցանակ.—Կ. Պոլսի պատրիարքութեան Տեղապահի ընտրութիւնը.—Կ. Պոլսի Ազգային ժողովի երեսփոխանութեան հաստիւն.—Հայեր ի Թիւրքիա.—Նամակ խմբագրութեան. — Համարատուութիւն Հ. Ց. Միութեան.—Յոյսեր Փոքր-Ասիոյ մասին.—Թիւրք կառավարութեան դրամական տագնապը.—Տեղական. —Նոր հրատարակութիւն. —Արտասահմանի լուրեր.—Ծանուցումներ.—Բանասիրական (Թիւրքիոյ եկեմտական դրութիւնը)։

ՄՐՑԱՆԱԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերջին ժամանակները Հայերիս վրայ մտածման առարկայ դարձած է մեր ժիրայր հայրենիքի, Արմենիաի բազմաչարչար դրութիւնը։

Այդ մի ուրախալի երեւոյթ է։

Բայց պէտք է խոստովանիլ թէ այդ խնդրի նկատմամբ չատ անգամ այնպիսի մտածումներ և ցանկութիւններ կը յայտնուին մեր մէջ որ ցոյց կուտան թէ եւրոպաբնակ Հայերին մէջ դեռ խիստ չատեր լաւ ուսումնասիրած չեն Հայի և Հայաստանի դրութիւնը, հետեւապէս և Հայկական խնդիրը։ Երբ հարցնես ամեն Հայի, պատասխան կը ստանաս թէ կը փափաքի Հայաստանի ազատութիւնն իւր այժմեան անտանելի դրութենէ։ Բայց երբ հարցունես թէ ինչ միջոցներով կարելի է հասնիլ այդ ազատութեան, այնպիսի ազգային պատասխաններ կը ստանաս որ ցոյց կուտան թէ բոլորովին խակ է դեռ ընկերական խընդիրների ուսումնասիրութեան մէջ, նա մինչեւ անգամ չէ հետաքրքրուած պատմութիւններ կարդալու որ իմանայ թէ ճնշուած ժողովուրդներն ինչպէս ձեռք բերած են քաղաքական կեանք և ազատութիւն, նա մինչեւ անգամ չէ ուսումնասիրած իւր ազգի պատմութիւն, նա՛ բնաւ չճանչեր իւր հայրենիք որի ազատութեանն կը փափաքի։

Լոկ փափաքը գործնական արդիւնք չունենար եթէ այդ փափաքը գործադրելու համար հարկ եղած և կարելի եղած միջոցներն ալ լուրջ կերպով նկատողութեան և մտածման առարկայ չլինին։

Հանրային կրթութեան համար նշանակուած ծախքը ելմտացոյցին մէջ՝ 2 միլիոն Ֆրանքէն աւելի չէ։ Իրաւ է որ Թիւրքերի դպրոցներն — մի միայն Թիւրքերի դպրոցներուն խնամ կը տանի Տէրութիւնը—, մեծ մասամբ, հասոյթներ ունին բարէպաշտական հին կամ նոր հաստատութիւններէ։ Տէրութիւնը ոչինչ կանէ քրիստոնեայների դպրոցներուն համար։ Ա՛ռ առաւելն, Սուլթանը այլ և այլ հասարակութիւններուն եկեղեցական ընդհանրներուն կը ղրկէ երբեմն փոքրիկ գումարներ որոց մէկ մասը կը յատկացունեն իրենց դպրոցներուն պահպանութեան։

Հանրային շինութիւնների նախարարութեան համար նշանակուած է ելմտացոյցին մէջ «երկու և կէս միլիոն» Ֆրանդի չափ։

Հողագործութեան, վաճառականութեան, հանքերի և անտառների նախարարութիւնը կը ծախսէ տարեկան 3 միլիոն 500,000 Ֆրանգ, կլոր հաշուով։

Ելմտական նախարարութեան համար նշանակուած է ելմտացոյցին մէջ՝ տարեկան 31 միլիոն Ֆրանգի ծախք։ Հաշուակալութիւն ըսուած բանը չկայ բնաւ. անկարգութիւն, կաշառակերութիւն կը տիրեն այնտեղ ամեն աստիճաններուն վրայ և վերջին մէկ նախարարն որ մի քիչ ձեռակերպութիւն ուզեց մոցունել հոն, ամօթալի կերպով հեռացուցին պաշտօնէն։

Պատերազմական նախարարութեան տարեկան ծախքը, 1880-81ի ելմտացոյցին մէջ, 123 միլիոն Ֆրանգ էր կլոր հաշուով և ես կը խորհիմ թէ անկէ ի վեր աւելցած լինելու է քան թէ պակասած։ Օսմանեան բանակը՝ որ պէտք է ասել թէ բաւական պատկառելի դիրքի մէջ կը գտնուի, տէրութեան ելմտացոյցին գումարները ամենէն չատ ուտողներէ մին է եղած բնականապէս։

Այս վերջին ժամանակները արտաքոյ կարգի չափազանց ծախքեր եղած են։ Մի ազէտալի պատերազմէ յետոյ, հարկ եղած է նորէն չինել զօրաբանակին պէտք եղած նիւթերն, պակասած պէնքերուն տեղը լեցնել, ձիեր գնել և այլն, և այս կերպով ահագին գումարներ ծախսուած են վերջին հինգ տարուս միջոցին։

Զորս տարի յառաջ Ռուսերի գործարանին ապսպրուեցաւ 200 հատ խոշոր թնդանօթ և 700 հատ դաշտային թնդանօթ որոնք իրենց ռումբերով միկտեղ 27,600,000 Ֆրանգ արժեցին։

1885 ապրիլ ամսին մէջ, նորէն ապսպրեցին 99 խոշոր թնդանօթներ. 1885 յուլիսին և 1886 յունվարին նորէն ապսպրեցին 99 հատ դաշտային փոքրիկ թնդանօթներ որոց արժէքն եղաւ 21 միլիոն 380,000 Ֆրանգ որ գումարելով վերոգրեալին հետ, ամբողջի արժէքն կանէ 48 միլիոն և 980 հազար Ֆրանգ։

1887ին, Պրն. Մաւզէրին ապսպրեցին 500,000 հրացան չինել 9 ½ հաշուորդամէթր նեղքին տրամաչափով (calibre) և 50 հազար կարճափող հրացան հեծելազօրքի համար. ասոնց ամեն մէկ հատին համար 84 Ֆր. գին որոշուած լինելով, ամբողջին գումարն եղաւ 46 միլիոն Ֆր.։ Միեւնոյն գործարանատէրին ապսպրեցին չինել նաեւ 150 միլիոն փամփուշտ (cartouche), 14 միլիոն Ֆրանգով։ Ուրեմն Մաւզէրի եղած ապսպրանքներուն ամբողջի արժէքն է 60 միլիոն Ֆրանգ։

Ծովային նախարարութեան սովորական ծախքը, թէեւ անունով կայ միայն այժմ ծովային նախարարութիւն, 19 միլիոն Ֆրանգի չափ նշանակուած է ելմտացոյցին մէջ։ Այդ նախարարութիւն վերջերս ստացաւ ծովային մի մեծ մինչեւ ցայսօր բեռներն վեր հանելու համար (grue flottante) որի համար 460,000 Ֆրանգ արուեցաւ. ապսպրեց նաեւ 250 հազար ռումբեր որոնց համար պիտի վճարուի 4 միլիոն 6 հարիւր հազար Ֆր.։ Ասոնցմէ զատ ապսպրած է 45 հատ ընդարձակօրէն ինքնաշարժ torpilleur որոց արժէքն է 460,000 Ֆրանգ։ Նաեւ պիտի չինել տրուած 12 հատ torpilleur à

Նրանց թվում էր և Ֆրանսիայի նախկին նախագահ Ժյուլ Գրեվին, որ ներկա էր գալիս իր փեսայի՝ Վիլսոնի հետ։

Ֆրանսիական մամուլը մեծ ուշադրություն է դարձնում Վիլսոնի ընտանեկան հանգամանքների վրա։ Ասում են, որ Վիլսոնի առաջին կինը մահացել է 1914 թվին, և որ նա ամուսնացել է երկրորդ անգամ 1915 թվին։ Նրա երկրորդ կինը Գալթ անունով մի հարուստ վաճառականի դուստր է։ Նա ունի երկու աղջիկ, որոնցից մեկը ամուսնացած է Մակադուի որդու հետ։ Մակադուն եղել է Վիլսոնի կաբինետում գանձապետ։

Ֆրանսիական մամուլը գրում է, որ Վիլսոնի ընտանիքը շատ հարուստ է։ Նրա կինը ունի մեծ կալվածքներ Նոր Մեքսիկոյում, Կալիֆորնիայում և Վաշինգտոնում։ Նրա եկամուտը տարեկան 200 հազար ֆրանկ է։ Վիլսոնի ընտանիքը ունի նաև մեծ գումարներ Ամերիկայի բանկերում։

Ֆրանսիական մամուլը գրում է, որ

կի տակ տաճիկները և տաճկաց կառավարչների կօչիկների տակ լիզվները ու նոցա կեղտոտութեանց մէջ թաւալուղները. և դուք այդ արատը, այդ կեղտը կը կրէք ձեր ճակատին մինչև հայի գոյութեան վերջին րոպէն ...։

ՆԱՆՈՑ

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐԲԻԱ

Հայազգի մեքենագէտ Գալաֆեան էֆէնտիի գործարանը հետզհետէ մի կարեւոր դիրք կը ստանայ Թիւրքիոյ մէջ։ Սուլթանը հրամայեր է Գալաֆեան էֆէնտիին 5 չոգեմակոյկները չինել որոց մին Զմիւռնի առջեւ, մին Պէյրութի, մին Սէլանիկի և երկուքն ալ Կ. Պոլսոյ նաւահանգստին մէջ պիտի չրջապատին ծովեղերքները, մաքսային պահպանութեան համար։

— Մեծ. Մկրտիչ էֆէնտի Էսայեան՝ յուլիս 3ին մեկնած է Կ. Պոլսէն դէպի Իզմիր ուրկէ պիտի ճանապարհորդէ Եւրոպա։

—Զմիւռնի այգիներին մէջ որթատունկը տարածուած և մեծ ջանքեր հատուցած լինելով, հողագործական ընկերն Նուրի պէյ հետաքրքրով հրատիրած է Իզմիր Պրն. Նչան Գալֆայեանը, Մանչեսթրի հողագործական վարժարանի նախկին ուսանողներէն մին, որ պիտի մանանկցի այնտեղ կատարուած որթատունկի յանձնախմբի աշխատութիւններին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիւրքիոյ Պ... քաղաքէն ստացած ենք հետեւեալ նամակը որի հրատարակութիւնն խնդրուած է մեզմէ, առանց դնելու լրագրին մէջ իրենց ստորագրութիւնները և քաղաքի անունն։

«Նկատելով ձեր հառնդուն աղգասիրութիւնն ու անձնազոհ աշխատութիւնը, Ընկերութիւնս փափաքեցաւ խրախուսանք մի փոքր ծառայութիւն մատուցանել ձեր թերթին որ Հայոց ազատութեան չնչառանն է այսօր և կենդանի բոլոր ազգի հարցատարաբչաց գեմ. ուստի և Ընկերութեանս Գործադիր ժողովը որոշեց իւր 88 մայիս 17ի նստին մէջ, որ երբէք Ամերիկան ներկայ յուլիսէն յետոյ չդադրի փոխանակ դադրելու, յանձ. ժամ Ընկերութեանս պարտական ըլլայ

Ա. Տարեկան (50) լիրան ֆրանգ նպատ տալ Ամերիկա լրագրոյն, վճարելի կանոնաւորապէս և անխափան ամեն տարւոյ վերջն, պարմանաւ որ տարուէ տարի յաւելնայ այդ նպատ երբէ Ընկերութեանս դրամական վիճակը ներէ։

Բ. Ամեն տարի մէկ մէկ հանդանակութեան ձեռնարկել ի նպատ Ամերիկայի երբէ պարագայք ներեն։

Ներկայիս ծանուցանելով ձեր ազնուութեան ժողովուրդս այս որոշումն, կար և կարօտութիւն կը մատղիենք ձեզ ի սրտէ և կը ձեռնք և այլն։

Գործադիր ժողով Ա... ընկ.
23 մայիս 88
Պ...

Համարատուութիւն Հ. Զ. Միութեան

Այսօր հրատարակուած է «Հայաստանի Զաւակներուն Միութեան» կեդրոնական վարչութեան մէկ և կէս տարեկան տեղեկագիրն իւր հաշուեցոյցով մէկտեղ։ Այդ համարատուութիւն որ առանձին թղթի վրայ տպագրուած է, այսօր կը ղրկուի Ամերիկայի հետ մեր բոլոր բաժնորդներուն։ Անոնք որ երբէմ առ երբէմ ծախու կառնեն Ամերիկան, պէտք է նոյնը պահանջեն ծախողներէն։

Հաշուեցոյցի վերնագիրներէն մին սխալմամբ դրուած է ՆԱԽՔ որ պիտի լինի ՄՈՒՏՔ, ինչպես այդ կը հասկըցուի թէ հաշիւներէն և թէ միւս վերնագրէն որ կրնկրկայտնէ ելքը։

Փոքր-Ասիոյ մասին յոյսեր

Նիւ Եորքի Press լրագրի յունիս 25ի թուին մէջ կը կարդանք հետեւեալը.

«Ամերիկացի դիտականներուն մի խումբ որոց կօդնեն Ամերիկացի դրամատէրները, ուրբաթ օր մեկնեցան այստեղէն Եվրոպայի հովիտը երթալու և հոն նախկին Բաբելոնի տերդիներըը պեղելով խուզարկութիւններ ընելու համար։ Այս և այսպիսի ուրիշ ձեռնարկութիւններ, ինչպես կ. Պոլսէն մինչեւ Պաղտատ երկաթուղու շինութեան առաջարկը, մեծ իրաւունք կուտան մեզ յուսալու թէ Փոքր-Ասիան մօտիկ ապագայի մէջ պիտի լինի դարձեալ բազմամարդ, քաղաքակրթուած և բարգաւաճ կայսրութիւններ ունեցող մի երկիր։»

Թիւրք կառավարութեան դրամական տագնապը

Կ. Պոլսէն յուլիս 3ին կը գրեն հետեւեալները.

«Դուբսան Պայրամին մօտեցած լինելով, Թիւրք կառավարութեան դրամական ժառանգները ստացած են զգուշացում որ վճարեն կամայ ակամայ պէտք է որ բաւական գումար վճարուի կարօտ պաշտօնատարներին որպէս զի վայելուչ կերպով կատարեն այդ մեծ օրի, Դուբսան Պայրամի ծօնը։ Յոյսերնին դրած էին Պ. Հիրշի ոսկիներուն վրայ. բայց այն երջանիկ օր որ պիտի ստանան Պ. Հիրշի միլիոնները, կարծես թէ հետզհետէ աւելի կը հեռանայ։ առ այժմ յոյս չկայ որ շուտով համաձայնութիւն գոյանայ իրաւարարներուն մէջ, Պարոն Հիրշի հաշիւներն վերջնականապէս մաքրելու համար։

«Նախարարական խորհուրդը իւր վերջին երկու նիստերին մէջ խորհրդակցեցաւ թէ արդեօք յարմար չը լինի՞ը եթէ մէկ երկու տարի դադրեցնէ յունիսի 1ին 24 տոկոսի վճարումները և չդիտէ թէ ինչպես անել աղատուելու համար իւր դրամական այժմեան նեղ դրութենէն։»

ՏԵՂԱԿԱՆ

Երէկ երեկոյ տեղիս Հայ դպրոցականութեան մէջ մի Մասնաժողով կազմուեցաւ, ուսնելու համար առաջիկայ կիրակի օր Պերլինի դաշնագրի 64դ յօդուածի ստորագրութեան 10դ տարեդարձը։ Այդ առթով մի ճաշկերոյթ եւս պիտի տրուի որի մասնակցութեան տոմսակի դինն է 5 ֆր.։ Տեղի և ժամի վերաբերեալ տեղեկութիւնները կը հրատարակուին առաջիկայ չորեքի օրի թուին մէջ։ Ցանկացողները պէտք է որ չորեքի օրէն առաջ ստանան իրենց տոմսակները։

—Կիրակի օր Վալէթի թատրոնին մէջ գումարուեցաւ Ֆրանսացիների հրաւիրած «Ազգային միթինկ»ը որի նպատակն էր բողոքել օտար ձեռնադործների տարածմանը դէմ Ֆրանսայի մէջ։ Բայց դիւանը կազմուելուառեն մեծ խռովութիւններ ծագեցան, որ ընդհատութիւններ սկսան և ոստիկանութիւնը միջամտելով բռնութեամբ ցրուել այդ դումարում։ Մի քանի հատուածներ կան ձերբակալուած որոնք գէնք կը կրէին իրենց վրայ։ Այդ միթինկին ցրուելէն յետոյ Ֆրանքօ-իտալական միութեան անդամներն հաւաքուած են Սէրքիլ Արթիսթիքի կեդրոնատեղը և հոն ատենաբանութիւններ անելով բողոքած են «Ազգային միթինկ»ը հրաւիրողներուն ձեռնարկին դէմ։

— Հարիւրմեակայ ներմաչափը բայ օրի մէջ երէկ առաւօտ ժամ 7ին ցոյց կուտար 17 աստիճան, կէսօրին 26, կէսօրէն յետոյ ժամ 2ին 27½ և ժամ 6ին 24 աստիճան (իսկ Փարիզի մէջ երէկ առաւօտ 15 աստիճան էր ջերմութիւնը)։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Շնորհակալութեամբ ստացանք Վիէննայի Մխիթարեան Պատ. Միաբանութեան ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ ի յուլիսի ամսաթերթը որի բովանդակութիւնն է հետեւեալը.

Բանասիրական — Տառադարձութեան խնդիր. — Հիւպշման և Աբեղեանեան Հայ արտասանութիւն. — Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնին վրայ. —Գրական — Ռուսահայոց գրականութիւնը. — Ազգային հրատարակութիւնք 1887 տարւոյ։ —Մատենագիտական—Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց։ — Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական. — Յուցակ Հայկական Ձեռագրաց Պերլինի արքունի Մատենադարանին։ — Նորալուրք։ — Տնտեսական։ — Մանրալուրք։ — Քաղաքական տեսութիւն (Պատկերազարդ)։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Պերլինէն «Թայմզ»ին և «Սթանտարտ»ին ղրկուած հեռագիրները կը չարունակեն յայտարարել Վիլհելմ կայսրի Պետերբուրգ այցելութիւնը պիտի կրնայ բարւոքել երկու արքունիքներուն իրար հետ ունեցած յարաբերութիւնները, բայց չպիտի կրնայ փոխել երկու կայսրութիւնների քաղաքականութիւնն։

—երկուշաբթի օր, Անգլիոյ Լորտերի Խորհրդարանին մէջ լորտ Պրոսի ուշադրութիւն հրաւիրեց օտար Պետութիւններին, և մանաւանդ Ֆրանսայի, իրենց ծովային ուժերը բազմապատկելուն վրայ։ Լորտ Բարնարվօն փափաքեցաւ թէ հարկ է Անգլիան եւս պատրաստել և խոշոր Ինդոանօթներ թիւը աւելցնել։ Բայց լորտ Էֆինհէմ պատասխանեց կառավարութեան կոչմէն թէ այժմեան դրութիւնը լաւ է և վրդովելու առիթ չկայ։

— Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ կիրակի երեկոյ ժամ 10ին, 45 Պուլկար աւազակներ մի խումբ չրջապատեր է Պէլօվայի (Բուլղարի) երկաթուղու կայարանը և առեր իր հետ տարեր է Վիէննայի ընկերութեան գործակատար Գ. Լաֆնալէը որ աւազակներէն հպատակ է և Հիրշի ընկերութեան գործակատար Գ. Պինաեր որ նոյնպէս աւստրիացի է։ Աւազակներն չատ գէշ վարուած են իրենց ձերբակալած անձերին հետ որոնք երկուքն ալ ընտանեբի հայերը են։

— Ամանիայի բժիշկներն մի տեղեկագիր հրատարակած են Ֆրեհերիկ Գ կայսրի հիւանդութեան և անոր արուած դարմանների վրայ։ Այդ տեղեկագրի մէջ կուգեն ապացուցանել թէ Տօքթէօր Մաքէնզի անգլիացի բժիշկը շատ մեծ սխալներ գործած է։

— Վիէննայէն կը հեռագրեն Լոնտոնի «Թայմզ» լրագրին թէ Վիէննայի քաղաքական շրջաններին մէջ կարծեր որ Ռուսիան նոր առաջարկն —

ներ անէ պուլկարական խնդրին վերաբերմամբ։ Կերեւի որ կը հաստատուի այն կարծիք թէ Պին. ոը կիերս նորէն պիտի խնդրէ պարզապէս Ֆերտինանա Իշխանին գահընկեցութիւնը, Սոպրանյէի լուծումը և մէկ Թիւրք և մէկ Ռուս, երկու բարձր յանձնախառներէ (քօմիսէր) անուանումը որոց պաշտօնը լինի մի նոր նախարարութիւն կազմել։ Նոյնպէս պէտք է կառավարական գործերն վարեն մինչեւ որ նոր Իշխանը ընտրուի։ Գլխաւոր դիմողութիւնը որ թերեւս կարելի լինի Ռուսիոյ կողմէն, այս պիտի լինի որ համաձայնիվարչական միջոցներէ մի ծանծաղոտով կազմուելուն որի մէջ բոլոր պետութիւններն ալ իրենց ներկայացուցիչներ ունենան։

—Անցած ուրբաթ օր, Սլէմնիայի բոլոր նախարարներն երթալով նախկին Կայսրուհուն Վիկթօրիայի մօտ, յայտարարած են թէ հանդուցեալ Ֆրէտերիկ Գ կայսրի այն թուղթերը որոնք Լոնտոն ղրկուած են, չատ կարեւոր են ազգային գետութեան համար և պէտք է որ իրեն վերադարձուին։ Վիկթօրիա Կայսրուհին պարզապէս պատասխանած է թէ այդ թուղթերը որոց կարեւորութիւնն ինքն ալ չուրանար, հանգուցեալ Կայսրի անձնական թուղթերն էին և թէ առ նոր կամքին ու հրամանով ղրկուած են արտաքսման։ Յայտարարած է նաեւ թէ այդ թուղթերը այն ժամանակ միայն պիտի արուին հրատարակութեան երբ հանգուցեալ Կայսրի յիշատակը պաշտպանել հարկ լինի և կամ եթէ կրինուին այն հալածանքները որոնք եղան իրեն դէմ. հետեւապէս ինք միայն պէտք է որոշէ այն ժամ երբ յարմար կը լինի այդ թուղթերը յանձնել իր որդւոյ, Վիլհելմ Բ Կայսրին։ Միանգամայն աւելցուցեր է որ եթէ Վիլհելմ կայսրը չուզէ հրատարակել Ֆրէտերիկ Գ կայսրի քաղաքական կտակն, ինք պիտի հրատարակել տայ անգլիական լրագրներին մէջ։ Պ. Գիւսլաք և իր որդի ներկայ չեն գտնուած այդ տեսակցութեան։

—Վիլհելմ Բ Կայսրը իր հետ առնելով գաւառական նախարարն, կիրակի օր գնացեր է իր մօր այցելութեան և յայտարարեր է անոր որ եթէ հանգուցեալ Ֆրէտերիկ կայսրին տեւէ մէկ թուղթը հրատարակուի առանց կառավարութեան հաւանութեանը, կրնայ Տէրութեան դէմ գաւազրութեան յանգանք համարուիլ։ Կ՚հաւատան թէ այդ խօսակցութիւն մեուած է երկու ժամ և Կայսրուհին կրկնած է իր նախապէս ասածները, պնդելով թէ ինք հաստատապէս ուրացած է պաշտպանել իր ամուսնոյ Ֆրէտերիկ Գ ի յիշատակը և անոր թագաւորութեան գործերն և չթողուլ որ ալլոյներն ճշմարտութիւնն, թէեւ իրեն սպառնալիքներ լինին և անհանգստութիւններ պատճառուին։ Այս տեսակցութենէ յետոյ, մայրն և որդին չատ ցուրտ կերպով բաժնուած են իրարմէ։

Վիկթօրիա Կայսրուհին որ մի ժամանակէ ի վեր կը նեղուի տեւական չղացաւութիւններէ, ժամերս պիտի երթայ Բէչենհալի Ջուրերն բժշկուելու համար։

—Վիեննայէն կը հեռագրեն թէ Սերպիոյ Նախկին թագուհին կնաթողութեան վտանգին չենթարկուելու համար ընդունած է իր երկան, Միլան թագաւորին վերջին առաջարկներն որոնք իրեն բերած էր զօրավար Բրօֆիչ. իր բնակութիւն վերջնապէս պիտի հաստատէ արտաքսման մէջ իր քով պահելով իր 11 տարեկան աղան, մինչեւ որ չափահաս լինի։ Տիմիթրիոս արքեպիսկոպոսն գնացած է Պելկրատ, իր հետ տանելով Նախկին թագուհուն խոստումնագիրը որով յանձնառու կը լինի թագաւորի պահանջներուն։

— Ռուսիոյ Ձարը հրամայած է ռուսական ամբողջ բանակին մասնակցիլ այն հանդէսի որ պիտի կատարուի ռուս ժողովրդի քրիստոնեայ լինելուն 900րդ տարեդարձին առթով։

—Կաուն թէ Վիլհելմ Կայսրի և Ալէքսանդր Ձարի տեսակցութիւնը Պետերբուրգի մէջ չպիտի լինի, այլ Ֆինլանտիոյ ծովեզերքը, Ֆիժէնի դղեակին մէջ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

CONSTANTIN P. CHÉHIANTZ
Négociant-commissionnaire
à Milan (Italie)

Հայ վաճառականները որոնք կը փափագին ուղղակի յարաբերութեան մանել Պ. Կոստանդին Շէհեանցի պատուաւոր Հայ վաճառատան հետ, յանձնարարութեամբ ամեն տեսակ ապրանքներ գնելու կամ ծախելու համար, պէտք է դիմեն ուղղակի հետեւեալ հասցէին.

Monsieur Constantin P. Chéhiantz
No 18, Via Lauro, 18
Milan(Italie)

Ա Զ Դ

Մեծ. Պին. Լեւոն Ց. Մինասեան, Մխիթարեան վանքերի գործակատարն ի Վենետիկ, որ այդ բազմապիսի վանքերէ հրատարակուած գիրքերն և պատկերները կը ծախէ Ռուսաստանի մէջ դիւրամատչելի գներով, փափաքելով օգտակար լինել նաև Ամերիկային, յանձն առած է ծախել Ամերիկան թերթ առ թերթ Ռուսաստանի մէջ, հատը 20 սանթիմ մինչեւ յառաջիկայ յունիսի վերջ. իսկ այնուհետեւ հատը 10 սանթիմ, ինչպէս արդէն յայտարարուած է Ամերիկայի մէջ։ Այնտեղ ծախու կը գտնուին նաև մեր ազգանուն հրատարակուած տետրակները։

Պին. Լեւոն Մինասեան յանձն առած է նաև բաժնորդները գրել Ամերիկայի համար։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կարելի է առնալ Ամերիկայի Համբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած դիներով և փոստի ծախքը Համբագրատունէն վճարուելով։

Արժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

Խրիմեան Հայրիկ—ՎԱՆԴՈՑԻ (Ամեն. Խրիմեան Սրբազանի գրած սրատաշարժ, խրատական և աղատաչունչ տետրակը 1876ի Վանի հրդեհին նկատմամբ)։ 70 սանթիմ.

Գամառ. Քաթիպա — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի աղաւաչունչ և հրահանգիչ բանաստեղծուածները կը պարունակէ. սկիզբն գրուած է հեղինակին պատկերը)։ 2 ֆրանգ։

Գ. Աբովեանց—ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, գիտնալ թէ ի՛նչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ի՛նչպէս եկեր հասեր է մեր օրերը, ո՛րոնք եղած են իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները եւն.։ Դէորգ Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր, գրած էր այս «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»ը որ մինչեւ այժմ երբոյղ տպագրութեան արժանացած է։) 2 ֆր.

ՍԻՍՈՒԱՆ կամ Համապատում հայկական Կիլիկիոյ. Հ. Ղեւոնդ Ալիշանի այս հրաշակերտ՝ ոչ միայն ամենամեծ պատիւ կը բերէ բազմահմուտ հեղինակի հայրենապաշտութեան և հայրենասիրական զգացմանն, այլ և մեծ պարծանք է ամբողջ հայութեան համար որի փառաւոր յիշատակներն աւերակների մէջէն և գրաւոր փաստերի տակէն դուրս բերել յաջողած է։ Կիլիկիան, մեր վերջին թագաւորութեան օրրանն ու գերեզմանը, ներկայացուած է այս գրքի մէջ իւր ամեն մանրամասնութիւններով։ Ընթերցողը կը գտնէ այնտեղ պատմական, աշխարհագրական, տեղագրական, բնաքննական եւն. եւն. հին ու նոր տեղեկութիւններ, հայ թագաւորների հրովարտակներ, իշխանավարական, դատավարական եւն. հետաքրքրաշարժ ծանօթութիւններ ուրանք Ալիշանի պէս բազմահմուտ մի անձի ուսումնասիրութեան և խստապարկութիւնների արդիւնքն եղած են։ Հայ գրականութեան մէջ երեւցած այդ հրաշակերտ՝ որ հայրենասէրը վարդապետական Հ. Ղեւոնդ Ալիշանի ճարտար և անխոնջ ձեռքովը կանգնած է ցոյց տալու համար մեր Կիլիկեան թագաւորութեան փառքն ու պարծանքը, արժան է որ ջարդարէ ամեն մէկ Հայի գրադարանը զի ամեն Հայ իրաւունք ունի պարծենալու անով։

Գրքին սկիզբը կայ վեր. հեղինակին պատկերը։ Ամբողջ գործը՝ բացի մի ընդարձակ ներածութենէ, կը պարունակէ 592 երկիչեան երեսները։ Տպագրուած է ընտիր տեսակ թղթի վրայ և ունի 235 գեղեցկագիծ պատկերներ որոնք կը ներկայացունեն Կիլիկիոյ գեղեցկագոյն տեսարանները։ Ունի նաեւ Կիլիկիոյ աշխարհագրական ներքագիծ մէկ քարտէզը որ առանձինն եւս կը ծախուի Արմենիայի խմբագրատունը, ինչպէս նշանակուած է յետագրեալ ծանուցումներուն մէջ։

ՍԻՍՈՒԱՆի առաջնակարգ տեսակը (լաւագոյն թղթի վրայ տպագրուած և 15ի չափ գունաւոր պատկերներով և պարգեւագիրներով) 55 ֆրանգ։

Նոյնը Բ կարգի (առանց գունաւոր պատկերներուի) 40 ֆր.

Նոյնին ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆը (Այս վերջին տեսակ որ 1885 թ. «Բազմավէպ»ի իբր վերջին եռամսեայ պրակին հրատարակուած է, աշխարհաբար լեզուով քաղուածները կը ներկայացունէ ՍԻՍՈՒԱՆԷն որ գրուած է գրաբար լեզուով—թէև ոչ խրթին և անհասկնալի ոճով — և ծանօթութիւնները կուտայ Սիսուանի պարունակութիւններին վրայ այնպէս որ զայն չունեցողին ցանկութիւնը կը դրգռէ ունենալու համար և ունեցողին ալ մի լաւ առաջնորդ կը լինի այդ ընդարձակ աշխատութեան մէջ դիւրով աչքով չրջելու և հետազօտելու համար։ 3 ֆր. 50 սնթ.

Գամառ. Քաթիպա — ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Գամառ Քաթիպայի «Բանաստեղծութիւններ»էն Ազատ Երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 սանթիմ։

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ, ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ. Բ. տպագրութիւն, (սրպագրուած ի Ս. Էջմիածին) 10 ֆր.

Բաֆֆի—ԿԱՑԾԵՐ. Ա և Բ հատորներ. Ազգային վիպագիր Պին. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՑԾԵՐը։ Ա յս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գլխաւոր տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի ղաղզաղան ցեղերի և Հայերի գրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ազգերն։ Մի խօսքով, թէ՛ իբր ազգային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իբր հայրենասիրական գործունէութեան վարդապետարան և ծրագիր, արժան է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տուն։

Գին Ա. հատորին 7 ֆր., Բ հատորին 8 ֆր. և 50 սանթիմ։ Երկու հատորներն միասին գնողին 15 ֆր.։

ՏՆՕՐԷՆ—ԹՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐՓՈՒՔԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորբուգայեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.